



ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ՝ ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՀԱՅ ԳԻՐԵՐՈՒ 1600-ԱՄԵԱԿԻՆ

..... Source: ՆՈՐ ՕՐ  
Լիմասոլ, 31 Մայիս, 2005 ԴՈԿԹ. ԱԳԱՊԻ ՆԱՍԻՊԵԱՆ.ԷԶՄԷԲՃԵԱՆ

Ազգովին նշեցինք 90-ամեակը Հայոց Ցեղասպանության եւ վերանորոգեցինք մեր ուխտը՝ վճռակալությամբ հետապնդելու մեր արդար պահանջները՝ վերադարձը ուճիրով խլուած հայրենական մեր հողերուն ու հատուցում մեր կորսնցուցած մշակութային ու հոգեւոր հարստութեանց: Ու միասնաբար վերահաստատեցինք մեր յանձնառութիւնը՝ հաստատարիմ մնալու սրբազան մեր նահատակներու ազգային խոխուներուն:

Ազգովին պիտի տօնենք, նաեւ, 2005-ի ընթացքին, փառապանծ 1600-ամեակը Հայ Գիրերու Գիտին ու հաւաքաբար պիտի խոնարհինք վաստակին առջեւ հայերէն լեզուի եւ հայ դպրոցի մեր առաջին ուսուցիչ Ս. Մեսրոպ Մաշտոցի: Որովհետեւ Ա.Բ.Գ.ով մարմնատրոսած հայոց լեզուն է որ մեզի համար եղաւ մեր ազգային ինքնութեան, արժանապատուութեան ու ազգային միասնակալութեան երաշխիքը: Անով դիմակալեցինք ուճացման, օտարացման եւ անխցման վտանքները ու պատմութիւն չդարձանք:

...Եւ ափսոս, ազգովին ականատես պիտի ըլլանք, դարձեալ 2005-ին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անդրանիկ կրթարանին, «Անմահ Լուսոյ» տաճար Մելգոնեան Կրթական Հաստատութեան խափանումին՝ անոր 80-ամեակի շէֆին: Պիտի փակուի Սփիւռքի հայապահպանման մեծագոյն կեդրոններէն մէկը, հայակերտումի սրբազան դարբնոց մը:

Բայց որքան անյարիր, խոտոր ու հակոտնեայ են մեր Ցեղասպանութեան 90-ամեակի եւ Գիրերու Գիտին 1600-ամեակի նշումի, եւ, միա կողմէն, Մելգոնեան Հաստատութիւնը փակելու գաղափարները:

Իր ծնունդով ու առաքելութեամբ Մելգոնեանը եղաւ Սփիւռքի որեւէ կառոյցէն աւելի՝ յանձնառու մեր Ցեղասպանութեան չարիքի յաղթահարման: Իմաստուն ու հեռատես Կարապետ Մելգոնեանի փափաքն էր որ իր դպրոցը լուծեր թուրքին «վրէժը» եւ պատրաստէր «մեր նոր մեծերը» («Յուշարար», Մայիս 15, 1982, էջ 5): Արդարեւ, Մելգոնեանը եղաւ մեր Ցեղասպանութեան ազնուագոյն վրէժը: Բարձրագոյն հնչեցին մեր մեծաքանչ լեզուն ու հոգեթով երգերը, իսկ խրոխտ դոփիւնը մեր հայկական պարերուն՝ հնչուն վկայութիւնը եղաւ Ցեղասպանութեան դէմ մեր տարած յարթանակին: 20 Ապրիլ, 2005-ին, Հաստատութեան մէջ Մեծ Եղեռնի 90-ամեակի ոգեկոչման յաջող երեկոյին, երկու ուսանողներ, Տէնիցա Սթոյչեա եւ Մարթին Սիրաքով, օտարացած թոռները չարդերու ժամանակ Արեւմտահայաստանէն փախած ու Պուլկարիա ծուարած հայերու, գնահատելի բայց եւ յուզիչ հայերէնով տուին պատմութիւնը՝ Մելգոնեանի շնորհիւ իրենց վերագտած հայութեան:

Մելգոնեանը մինչեւ այսօր կը մնայ անգին յուշակոթող մը, Սփիւռքի վերապրումի սրտարուչ մեր ճիգին խորհրդանիշը: Առաջին հայ որբերու որբ ձեռքերով տնկուած ծառերը, արդէն ուռճացած, լուռ վկաներն են այս յաղթանակին:

Մելգոնեանը եղած է նաեւ, միշտ, սփիւռքացած մեր ժողովուրդին խճանկարը, ապրող ու կենդանի թանգարան մը: Ապրիլ 8, 2005-ին, աշակերտական վերջին «Երգ ու պարի երեկոյ»ի յայտագիրներուն վրայ տեղ գրաւած էին՝ զանազան երկիրներէ եկած, իբրեւ մէկ ժողովուրդի զաւակները միասին ապրած, բայց մօտալուտ բաժանումի ցաւը հոգեխոռով ճիչի վերածած ուսանողներուն մի քանի տողերը:

*«Ախր ուրիշ տեղ աշխարհի հազար անկիւնից եկած,  
Մի տան մէջ ապրող այսքան Հայ չկայ,  
Ախր ուրիշ տեղ Հային թեւ տոտող,  
Հայ շունչ տոտող,  
Հային Հայ պահող՝ Մելգոնեան չկայ»:*

Հաստատութեան հանդիսատարահը լեցուցած ներկաները հեռացան արտասուալից:

Ինչո՞ւ փակել հայ դպրոց մը եւ մասնատրաբար Մելգոնեանի նման կրթական հաստատութիւն մը, երբ մեր Սփիւռքը ո՞րեւէ ատենէ աւելի պէտք ունի այս կրթօճակին:

Տրուած հակասական պատճառաբանութիւններէն՝ ոչ ոք տակաւին հասկցած է թէ ինչո՞ւ կը գոցուի Մելգոնեանը: Աշակերտական թիւի, որակի եւ պիտաճէի պատճառաբանութիւնները համոզիչ չեն թուիր: Ու տեսայես կը հարցուի՝ եթէ թերութիւններ կային կամ թերացումներ եղան, ինչո՞ւ ժամանակին չարբագրուեցան անոնք: Այսօր, ինչո՞ւ անտեսել Կիպրոսի մէջ Մելգոնեանին վայելած բացառիկ առաւելութիւնները՝ կրթութեան ազատ պայմաններ՝ հայախօս համայնք, աշխարհագրական կեդրոնական դիրք եւ նիւթական շատ կարեւոր օճանդակութեան խոստում տեղւոյն բարեացակամ պետութեան կողմէ:

Տարիներու իր փորձառութեամբ իմաստնացած Ալեք Մամուկեանի համոզումն էր թէ՛ «Որեւէ կրթական օճակի խափանում՝ ազգային աղէտ մըն է մեզի համար»: Եւ իրապէս, ազգային աղէտ է Մելգոնեանը փակելու որոշումը: Շարքաթօրեայ դպրոց, ճամբար, գիտահետազօտական կեդրոն կամ ցուցահանդէս՝ խիստ օգտակար նախաձեռնութիւններ ըլլալով հանդերձ, չեն կրնար երբէք փոխարինել հայկական երկրորդական վարժարանը, մանաւանդ Մելգոնեանի նման համապարփակ գիշերօթիկ կրթօճակը՝ հայ սերունդներու պատրաստութեան մէջ: Արդարեւ, իր լեզուին, պատմութեան ու մշակոյթին գիտակից հայ սերունդին պատրաստութիւնը պէտք է նկատուի որեւէ միութեան առաջնահերթ մտահոգութիւններէն մէկը: Առանց հայ զգացող ու հայօրէն ապրող մեր նոր սերունդին՝ հայը կը վերածուի օտարը կապկող եւ օտարէն կախում ունեցող արարածի, «Հայ Դատ»ը չունենար իր ամրակուտ պահանջատէրը եւ հայրենի հողն իսկ կրնայ վերածուիլ սոսկ տարածքի:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան նման կրթօճակի մը փակումը մահացու հարուած մը պիտի չլլա՞ր Սփիւռքի հայեցի կրթութեան գաղափարին: Կիպրոսի մէջ շատ ծնողներ կ'ըսեն արդէն:

Եթէ գիտնայինք որ Մելգոնեանը պիտի գոցուէր, առաջին օրէն յունական վարժարան կը դրկէինք մեր զաւակները: Ի՞նչ պէտք կար հայկական կրթարանի:

Տակաւին, Սփիւռքի մէջ որոշ թիւով հայ ուսանողներ, բայց մանաւանդ մելգոնեանցիներ, ներշնչուած իրենց ուսուցիչներէն, հայագիտութիւն ուսանել էին՝ մեր լեզուին ու գրականութեան հանդէպ պաշտամունքի հասնող նուիրումով: Մելգոնեանին տրուած այս հարուածէն ետք Սփիւռքի մէջ պիտի ունենա՞նք հայագիտութիւնը իրեն ասպարէզ ընտրել փափաքող ուսանող: Հայերէն թերթ ու գիրք կարդացողներ եւ հայերէն գրող Հեղինակներ պիտի զտնուի՞ն:

Կարելի է հոս յիշատակել արդիւնքը 1996-ին, Մելգոնեանի 70-ամեակին առթիւ կատարուած պզտիկ հետազոտութեան մը թէ՛ Հաստատութիւնը 47 հեղինակ եւ 237 անուն գիրք պարգեւեր էր մեր ժողովուրդին: Իրագործում մը՝ որով պիտի կարենար արդարօրէն հայարստանալ որեւէ կրթօճախ աշխարհի հրապ:

Ճիշդ է ականջալուր ըլլալ կեանքի փոփոխութեանց եւ քայլ պահել ժամանակին հետ: Բայց կան արժէքներ, որոնք անժամանցելի են եւ այդպիսի արժէք մըն է մայրենի լեզուն: Երոպայի Խորհուրդին եւ Մարդկային Իրաւանց Մարմիններուն կողմէ կազմակերպուած «Փոքրամաս. նութիւններու Լեզուական Իրաւունքներ»ուն նուիրուած միջազգային գիտաժողովին ( Ռովանիեմի, Ֆինլանտա, 1991 Մայիս, 30-1 Յունիս), Աստրիոյ Արտաքին Գործերու նախարար Դոկտ. Էտտա Ուէիսի ոսկի խօսքը, թէ՛ «Մայրենի լեզուն անհատի մը եւ ժողովուրդի մը արժանապատուութիւնն է», կը հնչէ տակափն անմոռանալի:

Երբ նկատի ունենանք թէ՛ Երոպայի, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու ու Ռուսիոյ մէջ տեղական լեզուները այնքան գերիշխող դարձած են եւ օտարախօսութիւնը համատարած, որ գոյութիւն ունեցող սակաւաթիւ հայկական վարժարանները գրեթէ անզօր կը մնան ուսուցանելու մեր մայրենին, Մելգոնեանի գոյութիւնը կը դառնայ անփոխարինելի: Ան բացառիկ կարելիութիւնները ունի ( սնորհաբեամբ հայախօս գիշերօթիկ հաստատութիւն) մի քանի ամսուան մէջ հայերէն չգիտող ուսանողներն անզամ հայախօս դարձնելու եւ յետոյ ալ զանոնք հաղորդելու մեր ոսկեղնիկ Արեւմտահայերէնին:

Ճիշդ է նաեւ որ մեծ թիւով ծնողներ, նոյնիսկ Միջին Արեւելքի մէջ, ներկայիս կը նախընտրեն օտար վարժարանները: ՀԲԸՄիութիւնը, սակայն, իբրեւ մեր իրականութեան մեծագոյն ազգապահպան կազմակերպութիւններէն մէկը, կրնայ ուղեցոյց ըլլալ եւ առաջնորդել մեր ժողովուրդը դէպի մեր ազգային արժէքները: Հոսանքն ի վար չէ որ պիտի սասի ան: Տակափն, կրնայ Սփիւռքի հայեցի դաստիարակութիւնը զօրացնել՝ նախաձեռնելով հայերէն դասագիրքերու եւ հայ ուսուցիչներու պատրաստութեան:

1915-ին՝ առաւելաբար Արեւմտահայութիւնն է որ հայրենագրկուեցաւ եւ, հետեւաբար, սփիւռքահայութիւնն է բարոյապէս ժառանգորդը Արեւմտահայաստանին: Սփիւռքահայութիւնն է որ տէր պիտի կանգնի յարաբերաբար մաքուր ու ճշգրիտ արեւմտահայերէնին:

Մեր պարտքն է Մելգոնեանի նման կրթօճախներուն մէջ պահպանել՝ եղերաբախտ մեր նահատակ գրողներուն՝ Դանիէլ Վարուժանի, Չօրապին եւ այլոց անգին ժառանգութիւնը՝ լեզուի եւ գրականութեան ու փոխանցել նոր սերունդներուն:

Ակնկալելի էր որ Հայոց Ցեղասպանութեան 90-ամեակը եւ Հայ Գիրերու Գիտին 1600-ամեակը առաւել միացնէին ու ամրապնդէին մեր ժողովուրդը այս տարի: Այդպէս չեղաւ սակայն:

Ի սփիւռս աշխարհի ցրուած մելգոնեանցիները ցաւած ու պարզապէս ընդվզումի մէջ են: ՀԲԸՄիութեան անդամակցութիւնը, մասնատրաբար Միջին Արեւելքի մէջ, կարծէք կորսնցուցած է իր հաւատքը Միութեան նկատմամբ ու յուսախաբ է: Իսկ Կիպրոսի՞ մէջ - ողբերգական կացութիւն մը կայ: Մասնատուած ու բաժան.բաժան եղած է ան:

Կիպրոսի տեղական բոլոր թերթերը լեցուն են զանազան վարժարաններու եւ կրթական հաստատութիւններու վերամտադի յայտարարութիւններով: Իսկ Մելգոնեանը կը գոցէ իր դուռները: Անգլիացիներ, յոյն կիպրացիներ, պետական պաշտօնեաներէն եւ առեւտրականներէն մինչեւ կրպակներու տէրեր, բոլորը կը հարցնեն թէ ինչո՞ւ պիտի փակուի Մելգոնեանի նման փառատոր Հաստատութիւնը որ կղզիին մշակութային կեանքին մէջ այնքան ուշագրաւ եղած է: Ու ոչ ոք գիտէ պատասխանը: Հայութիւնը վիրաւորուած ու վարկաբեկուած է հոս: Տեղական անգլիական եւ յունական թերթերը եւ հեռուստացոյցի կայանները կը շարունակեն իրենց հետաքրքրութիւնը Մելգոնեանի տագնապին առնչութեամբ:

Իսկ Մելգոնեանի այժմու ուսանողները, շփոթած, ընդվզած ու հոգեպէս լլկուած, պիտի կարենա՞ն երբեք մոռնալ այս տարեշրջանը: Կրցա՞ն անոնք կեդրոնանալ իրենց դասերուն եւ պատրաստուիլ արտաքին քննութեանց: Վերջին երկու տարիներուն անոնք չմասնակցեցան նաեւ Պէրոպի Ալէք Մամուկեան Կեդրոնի Մշակութային Յանձնախումբին կազմակերպած Բանաստեղծական Յօրինումի Մրցանքին, որուն կը ներկայանային «ստուար թիւով» ու կը խլէին «առիծի բաժինը» մրցանակներուն, համաձայն *Խօսնակ*-ի Պէրոպի թղթակիցին ( *Խօսնակ*, Հոկտեմբեր.Դեկտեմբեր 2004, էջ 34):

Որոշուած է որ այս տարի Շրջանաւարտից Հանդէսը տեղի պիտի ունենայ Մելգոնեանէն հեռու՝ Hilton Park պանդոկին մէջ: Ուրեմն զեղչուած է Բարերարներուն Դամբանին առջեւ տեղի ունեցող աւանդական պաշտամունք-աղօթք, ծաղկեփունջերու զետեղում եւ երկու շրջանաւարտներու կողմէ խորհրդանշական «Լուսոյ» ջահերու փոխանցում՝ ուսանող երկու մելգոնեանցիներու (Շրջանաւարտներու թիւ 2005-ին՝ 23, 2004-ին՝ 32, 2003-ին՝ 27):

Կարգադրութիւնը եղած է որ ուսանող մելգոնեանցիներ իրենց ուսումը շարունակեն Նիկոսիոյ American Academy-ի մէջ, ուր առաջնորդուած են տեսնելու իրենց «նոր» դպրոցը: Անոնք վերադարձած են Մելգոնեան լալով եւ ըմբոստացած:

- Ինչպէ՞ս կրնան մեզ «դուրս շարտել մեր տունէն» ու դրկել դպրոց մը որ «Մելգոնեանի հոգին» չունի, գրած է ուսանող մը:

- Կը վայելէ՞ ՀԲԸՄիութեան որ մեր զաւակները առաջնորդէ օտար վարժարան, ինձի հարցուց մայր մը:

Ամէնէն շատ ցատողը, սակայն, պիտի ըլլան, անտարակոյս, հոգիները Մելգոնեան Բարերարներուն: Կարապետ Մելգոնեանի բացայայտ փափաքն էր որ դպրոցը վերապէր՝ նոյնիսկ ՀԲԸՄիութիւնը լուծարուէր: Սբ. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսը լիազօրութիւն պիտի ունենար նշանակելու յանձնախումբ մը, որ պիտի կարենար դրամատուներու մէջ աւանդ դրուած գումարին եկամուտներով մատակարարել Հաստատութիւնը (Մէթր Գ. Տէրտէրեան, «Երթաղանը որ կը շարունակէ հնձել», «Զարթօնք», 29 Օգոստոս, 2004, տեսնել նաեւ Լիբանանահայ Գրակապ Շրջանակ, «Օրացոյց - Ուղեցոյց», Հոկտեմբեր 2005):

Անգին գրութիւն մը, ստորագրուած բարերար Կարապետ Մելգոնեանի կողմէ, 1924, Յունուար 29-ին, Աղեքսանդրիա, նմանապէս բացորոշ կերպով կ'արտայայտէ կամքը Բարերարին, որուն փափաքն էր որ Մելգոնեանը տեսէր «դարձ դար» եւ որուն մշտատեւ գոյութիւնը ան հոգացեր էր իր իշխանական նուիրատուութեամբ: «Յիշատակարան Մելգոնեան Կրթական Հաստատութիւններու Անդրանիկ Հիմնարկութեան» գրութեան մէջ, բարերարը կ'ըսէ:

«Կը փափաքիմ որ Մելգոնեան Կրթական այս հաստատութիւնները տեսնեն դարձ դար եւ ըլլան լուսատուութեան վառարաններ, տալու համար հայ ազգին հայ հայրենիքին եւ մարդկութեան օգտակար եւ պարկեշտ նկարագրով անդամներ»:

Սոյն գրութիւնը ցուցադրուած էր ՀԲԸՄիութեան Նիկոսիոյ Մշակութային Յանձնախումբին կողմէ կազմակերպուած՝ «Կիպրահայ Անցեալը Լուսանկարներով» ցուցահանդէսին մէջ 29 Նոյեմբեր, 1991-ին, Միութեան Նիկոսիոյ Կեդրոնին մէջ:

Ինչո՞ւ ուրանալ, ուրեմն, բարերարին փափաքը: Ինչո՞ւ կոխկռտել հազարատր մելգոնեանցիներու եւ կիպրահայերու զգացումները:

Հայոց Ցեղասպանութեան 90-ամեակի եւ Հայ Գիրերու Գիտին 1600-ամեակին առիթով կարելի չէ՞ որ Միութեան Կերրոնական Վարչական Ժողովը վերատեսութեան ենթարկէ Մելգոնեանը փակելու իր որոշումը եւ զայն *վերակազմակերպելէ յետոյ վերաբանայ՝* ի յարգանս մեր բիւրատր նահատակներուն եւ հայերէն լեզուի ու հայաշունչ դպրոցի առաջին ուսուցիչին: Ի փառս նաեւ հայակերտումի նուիրուած մեծ Միութեան, այս կերպով վերաշահելով հաւատքը իր անդամակցութեան:

Մելգոնեան կրթական Հաստատութեան վերջին քսան տարիներուն ամէնէն փայլուն շրջանաւարտներէն մէկը, համալսարանական, հայկական բոյն կազմած եւ հայասնուն եւ հայախօս երկու փոքրիկներու հայր մը, որ ներկայիս կ'ապրի ովկիանոսներէն անտին ու իր ազատ ժամերը կը տրամադրէ հայերէն ուսուցանելով տեղւոյն շաբաթօրեայ դպրոցին մէջ, իր վերջին նամակով մաղթած էր՝ «Կրկին հանդիպիլ Մելգոնեանի սուրբ յարկին տակ»: Ջերմեանդ փափաք մը զոր կը բաժնեն հազարատրներ:

ՀԻՄՆԱԻՈՐ Ի՞ՆՉ ՊԱՏՃԱՌ ԿԱՅ ՈՐ ՉԻՐԱԿԱՆԱՆԱՅ ԱՅՍ ՄԱՂԹԱՆՔԸ: